# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 437
*17 հուլիս 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ**

Հարգարժա՛ն պարոն Մարգարյան,

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ 35-Ա, 36-Ն, 37-Ա և 38-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

**Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր ՝ Լ Ե Վ Ո Ն Զ Ա Վ Ա Ր Յ Ա Ն**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան*
*098 048 046*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

12 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 35-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12 -Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 12-ի արտահերթ նիստի օրակարգը.

1.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12 -Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3.ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 13.06.2017Թ.ԹԻՎ101/111.4/2869-17 ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 07.06.2017Թ. ԹԻՎ 01/16.1/3504-17 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 36-Ն

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ ,34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյան համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 26-ի <<Թումանյան համայնքի 2018թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 54-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Կողմ -4 | Դեմ -3 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ | ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ | |
| ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ | ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ | |
| ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ | |
| ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2018 թվականի հուլիսի 12-ի թիվ 36-Ն որոշման

# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Թումանյան համայնքի 2018 թ.բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում կատարել փոփոխություն.

1)Թումանյան համայնքի 2018 թ.բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում << Հողի օտարումից եկամուտը>> ավելացնել 12708,1 հազար ՀՀ դրամով, սահմանել 13592,3 հազ.դրամ,

2)Թումանյան համայնքի 2018 թ.բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում << Անշարժ գույքի իրացումից եկամուտը>> ավելացնել 1990,0 հազար ՀՀ դրամ, սահմանել 1990,0 հազար ՀՀ դրամ:

2. Թումանյան համայնքի 2018 թ.բյուջեի կապիտալ ծախսերում կատարել հետևյալ փոփոխությունները ըստ ոլորտների.

1) Բաժին(Ոլորտ)01.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.
Ծրագիր 01.

Միջոցառումներ:

Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսերի <<Վարչական սարքավորումներ>>-ի ձեռք բերման համար նախատեսված ծախսը ավելացնել 100,0 հազար ՀՀ դրամով, սահմանել 1100,0 հազար ՀՀ դրամ,

Թումանյան համայնքի բնակավայրերում <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> իրականացնելու համար նախատեսել 8028,1 հազար ՀՀ դրամ, սահմանել 8028,1 հազար ՀՀ դրամ,

2) Բաժին(Ոլորտ)04.Տնտեսական հարաբերություններ.

Ծրագիր 01.

Միջոցառումներ: Ճանապարհային տրանսպորտ.

Ավելացնել ճանապարհային տրանսպորտի համար նախատեսված ծախսը 3100, 0 հազար ՀՀ դրամով համայնքի բնակավայրերի ճանապարհների որակը բարելավելու նպատակով, սահմանել 3100.0 հազար ՀՀ դրամ,

3) Բաժին(Ոլորտ)06.Փողոցների լուսավորություն.

Ծրագիր 01. Միջոցառումներ:

Փողոցների լուսավորության համար ավելացնել 970,0 հազար ՀՀ դրամ ծախս՝համայնքի բնակավայրերի փողոցների լուսավորության մակարդակը բարձրացնելու նպատակով, սահմանել 970.0 հազարՀՀ դրամ:

Ծրագիր 02. Ջրամատակարարում.

Միջոցառումներ:

Համայնքի բնակավայրերի ջրամատակարարման համակարգի բարելավման նպատակով նախատեսել 2500,0հազար ՀՀ դրամ <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման>> ծախսերին , սահմանել 2500.0 հազար ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 37-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 5-րդ ենթակետով և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել՛ի գիտություն Թումանյան համայնքի 2018 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի
2018 թ.-ի հուլիսի 12-ի N 37 -Ա որոշման

# ՀԱՂՈՐԴՈՒՄ
# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2018թ.-ի երկրորդ եռամսյակի ընթացքում բյուջեն կատարվել է եկամուտների գծով 98,4%-ով,նախատեսված 56011,0 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 55256,2 հազ.դրամ: Սեփական եկամուտները `( հարկային եկամուտներ և տուրքեր,այլ եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 12248,6 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 11493,8 հազ.դրամ, կատարման տոկոսը՝ 93,8 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ ) նախատեսված էր 43762,4 հազ. դրամ, տրվել է 43762,4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%:

1. Վարչական մասի եկամուտները

2018թ-ի երկրորդ եռամսյակի բյուջեն վարչական մասով նախատեսված էր 56011,0 հազ.դրամ եկամուտ, փաստացի մուտքերը կազմել են 55256,2 հազ.դրամ,կատարման տոկոսը՝98,4 % : Սեփական եկամուտները `( հարկային եկամուտներ և տուրքեր,այլ եկամուտներ, եկամուտները) 12248,6 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 11493,8 հազ.դրամ, կատարման տոկոսը՝ 93,8%: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ ) նախատեսված էր հազ. դրամ, տրվել է 43762,4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 43762,4 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%:

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2018 թ-ի երկրորդ եռամսյակում նախատեսված էր 3319,8 հազ. դրամ ,փաստացի մուտքերը կազմել են 3802,6 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 114,5%, որը նախորդ տարվա համեմատ աճ ե լ է:

2) Գույքահարկ

Գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 185,0 հազ. դրամ , փաստացի մուտքերը կազմել են 191,5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 103,5 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր 3000,0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 2837,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝94,6% որը նախորդ տարվա համեմատ նույնպես աճել է

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 552,8 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 645,4 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 116,8%, որը նախորդ տարվա համեմատ աճել է :

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2018 թ- ի երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 5191,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 4017,2 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 77,4 % :

5) Պաշտոնական տրանսֆերտներ

Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված էր 43762,4 հազ. դրամ, տրվել է 43762,4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները 43762,4 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%:

2. Բյուջեի ընթացիկ ծախսերի կատարողականը
ըստ ոլորտների

Բյուջեի վարչական մասի 2018թ-ի բյուջեի ծախսերը երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 56011,0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 45341,8 հազ.դրամ կամ կատարման տոկոսը՝ 81,0 %:

3. Ըստ ոլորտների ծախսերը կատարվել են

1) Բաժին(Ոլորտ)1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.
Ծրագիր
Համայնքի աշխատակազմի պահպանություն, հանրային որակյալ ծառայությունների մատուցում
Միջոցառումներ:Ծառայություններ
Թումանյան քաղաքի աշխատակազմի պահպանության, Աթան,Ահնիձոր, Լորուտ, Մարց, Շամուտ,Քարինջ բնակավայրերի վարչական ղեկավարների պահպանության ծախսեր՝
նախատեսված - 28610,0 հազ. դրամ
փաստացի ծախս – 22201,3 հազ. դրամ
կատարման տոկոս – 76,6 %:

2) Բաժին(Ոլորտ)4. Տնտեսական հարաբերություններ.
Ծրագիր
Աջակցություն բռսաշրջության զարգացմանը
Միջոցառումներ1.:Ծառայություններ
Դրամաշնորհի տրամադրման միջոցով աջակցություն <<Լոռի>>մարզային ծրագրին
նախատեսված – 150,0 հազ. դրամ,
փաստացի ծախս չի կատարվել,կատարման տոկոս – 0 %:
Միջոցառումներ2 :Ծառայություններ
Դրամաշնորհի տրամադրման միջոցով աջակցություն ճանապարհային տրանսպորտի գծով միջոցառումների իրականացմանը
նախատեսված - 3100,0 հազ. դրամ
փաստացի ծախս – 3100 հազ. դրամ
կատարման տոկոս – 100,0%:

3) Բաժին(Ոլորտ)5. Շրջակա միջավայրի պաշտպանություն.
Ծրագիր
Համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում
Միջոցառումներ:Ծառայություններ
Դրամաշնորհիների տրամադրման միջոցով համայնքի բոլոր բնակավայրերում մատուցվել է աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ

նախատեսված - 3000,0 հազ. դրամ,
փաստացի ծախս - 3000,0 հազ. դրամ
կատարման տոկոս – 100,0 %:

4) Բաժին(Ոլորտ)6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն.
Ծրագիր
Միջոցառումներ 1:Ծառայություններ
Ջրամատակարարում:
Դրամաշնորհների տրամադրման միջոցով համայնքի բոլոր բնակավայրերում մատուցվել է ջրամատակարարում:
նախատեսված - 2400,0 հազ. դրամ,
փաստացի ծախս – 1662,6 հազ. դրամ
կատարման տոկոս – 69,3 %:
Միջոցառումներ2:Ծառայություններ
Նեբնակավայրային փողոցների լուսավորում
Ներբնակավայրային կենտրոնական փողոցների լուսավորության համակարգերի էներգետիկ սպասարկման ծառայությունների մատուցում
նախատեսված - 1000,0 հազ. դրամ,
փաստացի ծախս – 677,8 հազ. դրամ
կատարման տոկոս – 67,9 %:

5) Բաժին(Ոլորտ)9. Կրթություն.
Ծրագիր
Համայնքում նախադպրոցական կրթության, արտադպրոցական դաստիարակության և Օժանդակ կրթության զարգացում
Միջոցառումներ:Ծառայություններ
Թումանյանի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի գործունեության ապահովում,պայմանների բարելավում
Լորուտի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի գործունեության ապահովում,պայմանների բարելավում
Քարինջի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի գործունեության ապահովում,պայմանների բարելավում
Աթանի նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայության պահպանում
Ահնիձորի նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայության պահպանում
Մարցի նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայության պահպանում
Շամուտի նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայության պահպանում
Թումանյանի մանկական արվեստի դպրոց ՀՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում
Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների մատուցում
նախատեսված – 14775,0 հազ. դրամ
փաստացի ծախս – 12968,0հազ. դրամ
կատարման տոկոս – 87,8%:
6)Բաժին(Ոլորտ)10. Սոցիալական պաշտպանություն.
Ծրագիր
Աջակցություն համայնքի անապահով ընտանիքներին
**Միջոցառումներ:Տրանսֆերտներ**
Համայնքի անապահով ընտանիքներին օգնություն տրամադրվելու միջոցով հոգսերն աստիճանաբար թեթևանում են
նախատեսված - 1000,0 հազ. դրամ

փաստացի ծախս -920,0հազ. դրամ
կատարման տոկոս - 92,0 %:

## 4. ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1) Բաժին(Ոլորտ)1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.
Ծրագիր
Համայնքապետարանի աշխատանքային պայմանների բարելավում
**Միջոցառումներ**:Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ)միջոցառումներ
Վարչական սարքավորումների ձեռքբերում
Դռների և լուսամուտների փոխարինում
նախատեսված - 1000,0 հազ. դրամ
փաստացի ծախս - 950,0 0հազ. դրամ
կատարման տոկոս - 95,0 %:

2)Բաժին(Ոլորտ)4.Տնտեսական հարաբերություններ.
Ծրագիր
Ներբնակավայրային ճանապարհների վերանորոգում
**Միջոցառումներ:** Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ)միջոցառումներ
նախատեսված - 1800,0 հազ. դրամ
փաստացի ծախս 300,0. դրամ
կատարման տոկոս16,7 %:

3)Բաժին(Ոլորտ)6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն
Ծրագիր
Քարինջ, Լորուտ բնակավայրերի ներքին ջրամատակարարման համակարգի վերանորոգում
**Միջոցառումներ:** Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ)միջոցառումներ
Քարինջ բնակավայրի ներքին ջրամատակարարման համակարգի վերանորոգում
Լորուտ բնակավայրի ներքին ջրամատակարարման համակարգի վերանորոգում
նախատեսված - 1500,0 հազ. դրամ
փաստացի ծախս - 0 հազ. դրամ
կատարման տոկոս - 0%: -. դրամ

4)Բաժին(Ոլորտ)8. Կրթություն.
Ծրագիր
Քարինջի Նախադպրոցական Կրթության որակի բարելավում
**Միջոցառումներ:** Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ)միջոցառումներ
Վերանորոգում
Քարինջի Նախադպրոցական Ուսումնական Հաստատություն ՀՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավում
նախատեսված - 2359,1 հազ. դրամ
փաստացի ծախս -0 դրամ
կատարման տոկոս - 0 %:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 38-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 13.06.2017Թ.ԹԻՎ101/111.4/2869-17 ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 07.06.2017Թ. ԹԻՎ 01/16.1/3504-17 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 13/06/2017թ. թիվ 101/111.4/2869-17 գրությունը՝ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 07.06.2017թ. թիվ 01/16/.1/3504-17 հանձնանարականի կատարումն ապահովելու մասին՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի ազգաբնակչության շահերից ելնելով խնդրանքով դիմել ՀՀ կառավարությանը՝ ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի <<Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության գործունեության ծրագիրը հաստատելու մասին>> N 1296-Ն և 2011թ. սեպտեմբերի 8-ի <<Հայաստանի Հանրապետության հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> N 35 արձանագրային որոշումներով նախատեսվող 75 ՄՎտ հզորությամբ <<Շնող>> ՀԷԿ-ի կառուցումը դադարեցնելու համար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ